ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Գայանե Մարտինի Սոլախյանի «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում» (Эволюция евразийских интеграционных процессов на постсоветском пространстве) թեմայով ատենախոսության վերաբերյալ

ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին հանրապետությունների մեկը մյուսի հետևից ներգրավվեցին հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն միավորումներում, որի հիմնական խնդիրն էր նվազագույնի հասցնել երբեմն միավորված պետության փլուզման հետևանքները: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է հետխորհրդային տարածքում գրեթե բոլոր խոշոր ինտեգրացիոն գործընթացներին: Այս մասնակցության արդյունքը երկրի անդամակցությունն էր ԱՊՀ-ին, ՀԱՊԿ-ին, և ամենահեռանկարային ինտեգրացիոն նախագծին՝ ԵԱՏՄ-ին: Հետևաբար, այսօր հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել եվրասիական ինտեգրման գործընթացներին և ԵԱՏՄ համակարգային առանձնահատկություններին ու հնարավոր խնդիրներին:

Ներկայացված աշխատանքում Գ. Սոլախյանը քննարկել է հետևյալ հիմնահարցերը՝ եվրասիականության կայացումը և էվոլյուցիան, եվրասիականության գաղափարական ակունքները, եվրասիական ժառանգության փոխակերպումները, ինչպես նաև նեոեվրասիականությունը: Այս համատեքստում հեղինակն ուշադրություն արժանացրել ԱՊՀ երկրների ինտեգրացիոն համագործակցության մոդելները՝ մեկնաբանելով հետխորհրդային տարածաշրջանում առկա իրավիճակը և հետխորհրդային երկրների փոխհարաբերությունների բնույթը սոցիալ-քաղաքական ինտեգրացիոն գործընթացներում:

Սույն աշխատանքի ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածությունը, օբյեկտը և առարկան, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Իսկ թեկնածուական ատենախոսության եզրակացությունում հեղինակը շարադրել է հիմնական եզրահանգումները:

Հիմնվելով վերոհիշյալ մոտեցումների և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների վրա՝ ցանկանում եմ անդրադառնալ հետևյալ դիտողություններին.

1. Ուսումնասիրության թեման լայն է, որը խանգարել է հեղինակին հստակորեն ներկայացնելու սեփական մոտեցումները: Դա նկատելի է ատենախոսության հիմնական նպատակի ձևակերպումից, որի համաձայն՝ հեղինակը «բացահայտել է եվրասիականության էությունը, պարզել ԱՊՀ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների ընթացքն ու զարգացման հնարավոր հեռանկարները, և դրանում ՀՀ հեռանկարները» (էջ 9):
2. Վիճահարույց է ատենախոսության ուսումնասիրության օբյեկտի և առարկայի ծավալային և իմաստային հարաբերակցությունը: Այսպես, հեղինակի կարծիքով՝ ուսումնասիրության օբյեկտը «բազմաշերտ և բազմակողմանի եվրասիական գործընթացներն են» (էջ 9), իսկ ուսումնասիրության առարկան «Եվրասիական ինտեգրման գործընթացների գաղափարա-քաղաքական հիմքերի փոխակերպման համապարփակ իմաստավորումն է» (էջ 9): Անհասկանալի է այն, թե ի՞նչ նկատի ունի հեղինակը «համապարփակ իմաստավորում» ասելով: Հեղինակն ատենախոսության տարբեր ենթագլուներում այդ մասին հիշատակում է, այդպես էլ դա չբացահայտվելով:
3. Անհասկանալի է հեղինակի ներդրումն ատենախոսության առաջին գիտական նորույթում. «Евразийство рассмотрено как целостная мировоззренческая доктрина, представлено не как развитие классической

формы, а качественно новое направление, также проанализировано ее современное звучание как идея, требующая обогащения» (էջ 11): Այդպես էլ ատենախոսության ենթագլուներում հեղինակը չի բացահայտում «որակապես նոր ուղղությունը» կամ «ժամանակակից հնչեղությունը» (էջ 11):

4. Անհասկանալի են նաև թե ինչու՞ է ատենախոսության առաջին գլխում հեղինակն այդքան կենտրոնացել Եվրասիական գաղափարների շուրջ (էջ 16-58): Դրա փոխարեն ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը եվրասիական դոկտրինի հենքի վրա դիտարկեր տեսական և արդիական նշանակություն ունեցող այնպիսի հիմնախնդիրներ, որոնք հետխորհրդային երկրների քաղաքագիտական դպրոցներից պահանջում են նորարարական մոտեցումներ՝ եվրասիական ինտեգրման գործընթացների վերաբերյալ:
5. Բավականին լայն է ատենախոսության 3-րդ գլխի երկրորդ ենթագլխի վերնագիրը՝ «ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշերը և նրա հեռանկարները Եվրասիական ինտեգրացիոն գործընթացներում» (էջ 116-139): Անհասկանալի է թե ինչու՞ հեղինակը չի օգտվել այս ոլորտում մեր երկրի համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթերից և արդիական վերլուծություններից: Օրինակ՝ ՀՀ ռազմական դոկտրին, ՀՀ կիբեռանվտանգության ռազմավարությունը, Կառավարության ծրագրերը և հաշվետվությունները, ՀՀ ԱԳՆ հաշվետվությունները և այլն:
6. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը քննարկեր նաև 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած «ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության» և դրանով պայմանավորված նոր իրողությունները եվրասիական ինտեգրման համատեքստում:

7. Ատենախոսության սեղմագրի հայերեն ամփոփագրում առկա են լեզվական և տեխնիկական մի շարք սխալներ (էջ 18-20): Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն ավելի ուշադիր լիներ նման հարցերում:

Այսուհանդերձ, կարևորելով թեկնածուական ատենախոսության գիտական նորույթները և եզրակացությունները, ցանկանում եմ նշել, որ արված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում ներկայացված ատենախոսության արժեքը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում եմ, որ **Գայանե Մարտինի Սոլախյանի «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում» (Эволюция евразийских интеграционных процессов на постсоветском пространстве) ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության տեսություն»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, քաղ. գիտ. դոկտոր՝ **Աշոտ Ալեքսանյան**

Քաղ. գիտ. դոկտ., դոց. Ա. Ս. Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու՝ **Լ. Ս. Հովսեփյան**

ք. Երևան, 16.07.2020